



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

-444-

11 NOV 2017

351.71(47.995)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԵՐՍԻՍԻԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

11-Ն ԱՊՐԵՐԻՍԻ 1933 թ.

Հ Ր Ա Հ Ա Ն Ք

1932 թ. «ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ»
ՈՐԵՆՔԸ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

§ 1. Գյուղերում, կամ ամարանոցային վայրերում բնակվող քաղաքացիներին իրավունք է վերապահվում հասարակական նշանակություն ունեցող կուլտուրական և տնտեսական կարիքները բավարարելու համար վորոշում կայացնել ինքնահարկում սահմանելու մասին:

§ 2. Ինքնահարկում կիրառելու մասին վորոշում կայացնելու իրավունք է վերապահվում նաև Դիլիջան, Ստեփանավան, Կոր- Բալաղեա, Դորիս և Վաղարշապատ քաղաքների բնակչությանը, գյուղի բնակչության համար համհանձնեք ընդհանուր հիմունքներով:

Մանրագրում. ին. Ամարանոցներում ժամանակակից բնակչության սեզանի ընթացքում սենյակներ, տներ և բնակարաններ վարձող քաղաքացիները ինքնահարկման յենթակա չեն:

Երևան-Երևանի. 2-րդ. — Բանվորական աշխատ-
բուհը բնակվող բանվորները և ծառայողները ինք-
նահարկման լեռնապահ չեն:

Բանվորական ավաններ են համարվում նաև ագլյունաբերական ձեռնարկությունների և խորհրդային տնտեսությունների սահմաններում յեղած բնակատեղերը, վորտեղ ապրում են բացառապես ալլ ձեռնարկությունների բանվորները :

Ինքնահարկում սահմանելու համար քաղաքացիներին ընդհանուր ժողովում պետք է ներկա լինեն ովքեր գյուղի խորհուրդներին ընտրական իրավունքով սպառնող քաղաքացիներին ընդհանուր թվի կիսից վոչ պակաս մասը :

Յեթե պահանջվող ալլ թվով քաղաքացիները ներկա չլինեն ժողովում, ալլ ղեպըում ընդհանուր ժողով հրավիրվում է յերկրորդ անգամ, վորն համարվում է երաւապօր, յերբ ներկա յեն լինում հիշված քաղաքացիների մեկ յերրորդից վոչ պակաս մասը:

§ 4. Ինքնահայրկում սահմանելու մասին վորոշումը ընդունվում է ներկա յեղոյ քաղաքացիների ձայների մեծամասնությամբ և ընդունված վորոշումը պարտադիր է դառնում բոլորի համար :

§ 5. Քաղաքացիները ընդհանուր ժողովի մարտնչ
մը ենթնահարկման մասին, գյուղխորհուրդը իր յեղ-
րակացությամբ ներկայացնում և Շրջադիմին ի
քննության և հաստատության:

1-303

Յեթե 10 որպէս բնթացքում ներջործկումը չի հայտնում ընդհ. ժողովի վորոշումը բեկանելու մասին, ապա այդ վորոշումը համարվում է ուժի մեջ մտած և պարտադիր է տվյալ գյուղի բոլոր քաղաքացիներին համար, անկախ նրանից մասնակցել են նրանք ընդհանուր ժողովում, թե վոչ:

§ 6. Քաղաքացիների ընդհանուր խորհրդի վարչա-
մըն ինքնահարկման մասին, Շրջհրժրդկումը կարող է բե-
կանել այն դեպքում, յերբ այդ վարչումը խախտում է
«Գյուղի բնակչության ինքնահարկման» 1932 թ. որեն-
քը :

ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒՄԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՌՆԵՆՈՒ ԿԱՐԳԸ

§ 7. Ինքնահարկում կիրառելու խնդիրը կարող է դրվել քաղաքացիների ընդհանուր ժողովի քննությանը հասարակական կազմակերպությունների, գյուղխորհուրդի, կոլտնտեսականների, աշխատավորական մեհառնտեսաների և քաղաքացիների տնտեսիկն իմբերի նու խաճեռությամբ :

§ 8. Նախքան ինքնահարկում կիրառելու խնդրերը քաղաքացիներին ընդհանուր ժողովին քննության հանձնելը, դյուղխորհուրդը կալանատեսականներին, աշխատավարական մեծատեսակների ակտիվի և հասարակական կազմակերպությունների մասնակցությունը ծրագրում և այլ մեծարկումները, վերոնշյալ պետք և իրադրություն ինքնահարկման միջոցով և կազմում են այդ մեծարկումների իրադրումն, հետ կապված ծախսերի և նախնական նախահարկի :

§ 9. Ինքնահարկման միջոցներով միջանի դյուղերի ընդհանուր կարիքները, բավարարելու համար, ձեռնարկումները նախագծում և չրջանային գործադիր կոմիտեն, յեթև այդ դյուղերը ևն միացված մեկ ընդհանուր խորհուրդով:

Երջանային նշանակութուն ունեցող կարիքների վերաբերող ձեռնարկումները դարձյալ նախագծում և չրջանային գործադիր կոմիտեն:

Մանքություն. — Երջանային նշանակութուն ունեցող ձեռնարկում և համարվում միայն կուլտուրական և տնտեսական կապիտալ շինարարությունը:

§ 10. Յեթև ինքնահարկման կարգով գտնված դուլմարները ծախսվում են միջանի դյուղերի ընդհանուր կարիքները բավարարելու համար, ինքնահարկում կատարելու խնդիրը վորոշում և ամեն մի գյուղի ընդհանուր ժողովը, անկախ նրանից, միացված են այդ դյուղերը մեկ խորհրդով, կամ նրանցից յուրաքանչյուրն ունի իր խորհուրդը:

Մոտ տարածության մյա գտնվող փոքր գյուղերում ընդհանուր կարիքների համար ինքնահարկում սահմանելու խնդիրը կարող և վորսչվել քաղաքացիներին միջգյուղային ընդհանուր ժողովներում:

Մեծ քանակությամբ բնակչութուն ունեցող խոշոր գյուղերում ընդհանուր կարիքների համար ինքնահարկում կատարելու հարցը կարող և դրվել ատանձին մասերի ժողովներում, ըստ թաղերի, չրջանների և այլն:

ԻՆԴԱՍՏՐԻԱԿԱՆ ԶՆՎԱՆԵՐԳՅԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 11. Դյուղի ընդհանուր խաղվների վորոշման

մասին կազմվում և հաստատվում արձանագրություն յերկու որինակից:

Արձանագրության մեջ պետք և ժառանգված լինի՝

ա) ինքնահարկման նպատակը (ձեռնարկումի տնվանումը):

բ) ինչ ձևով և կատարվում ինքնահարկում — գրամով, թե բնականով:

գ) ինչ չափով պիտի մասնակցեն ինքնահարկմանը արդյունավի դրույքներով դյուղհարկ վճարող տնտեսությունները (գյուղհարկի ինչպիսի տոկոսով):

դ) ինչպիսի չափերով պիտի մասնակցեն ինքնահարկմանը կայուն դրույքներով գյուղհարկ վճարող տնտեսությունները:

ե) ինչ չափով պիտի մասնակցեն արդյունավի դրույքներով գյուղհարկ վճարող կոլտնտեսականները:

ը) ինչ չափով պիտի մասնակցեն կայուն դրույքով գյուղհարկ վճարող, կամ գյուղհարկից ազատված կոլտնտեսականները:

թ) ինքնահարկման վճարման ժամկետները:

ժ) ընդհանուր ժողովում ներկա գտնվող քաղաքացիների թիվը:

Վերոհիշյալ ձևով ընդհանուր ժողովի արձանագրությունը պետք և կազմել յերկու որինակից, վորոնցից մեկը ուղարկվում և չրջագործվում, իսկ մյուսը մնում և դյուղխորհուրդի գործերում:

§ 12. Ինքնահարկումը ընդհանուր ժողովների վորոշմամբ կարող և կատարվել ինչպես գրամով, նույնպես և բնականով (բնաբերքով):

**ԻՆՉՊԻՍԻ ԶԵՌԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ
ՀԱՄԱՐ Ե ԹՈՒԹԼԱՏՐՎՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ
ԻՆՔՆԱՀԱՐԿՈՒՄ**

§ 13. Ինքնահարկումը թույլատրվում է կիրառել մեկ կամ մի քանի գյուղերի կամ ամոթղ շրջանի բնակավայրերում կոլտուրական և տնտեսական հետևյալ կարիքները բավարարելու համար՝

ա) կոլտուր-կրթական, առողջապահական, ինչպես և գյուղատնտեսության բարձրացմանը նպաստող հիմնարկություններ (դպրոցներ, գրադարաններ, խրճիթ-լնթերցարաններ, տիումրներ, ժողովրդական տներ, մանկապարտեզներ, մանկական մսուրներ, հիմնական դպրոցներ, բժշկական, բուժական, անասնաբուժական և ագրոկայաններ, մթերապահատներ և այլն) կառուցման և տնտեսապես ապահովելու համար:

բ) ճանապարհային շինարարության համար (հասարակական նշանակություն ունեցող գյուղական ինչպես և դաշտային, ճանապարհների, կամուրջների, գետանցների կառուցում, վերանորոգում և պահպանություն):

Ծանոթություն.— Ինքնահարկման կարգով կատարվող ճանապարհային և ջրատեսակային շինարարությունը չի ազատում գյուղական բնակչությանը այն պարհակային աշխատանքներից, վերոհիշյալ նախատեսված են ճանապարհային ջրատեսակային շինարարության որոնքներով:

դ) Հրդեհային պահպանության համար (հրդեհ-պոստերի և սրահների կառուցում, սարքավորում, պահպանություն և օպերատիվություն):

դ) Գյուղի բարեկարգության համար (ջրհորների, բլրակների, ջրմուղի, հանրային աղբյուրների, լճակների և այլ ջրամբարների, հրապարակների, փողոցների, բաղնիքների, անասունների թաղելու վայրերի կառուցում, բարեկարգ պահպանություն, ճահիճների չորացում և այլն):

և ուղիով ֆիկացիայի և ելեկտրիֆիկացիայի համար:

Ծանոթություն.— Ելեկտրիֆիկացիայի վերաբերյալ հարցերը նախապես համաձայնեցվում են շրջանային գործադիր կոմիտեի հետ:

§ 14. Միանգամայն արգելվում է ինքնահարկման դրամարներն ուղտագործել գյուղական հասարակության ընդհանուր ժողովի վորոշմամբ շահատեսված վորքեի այլ կարիք բավարարելու համար, ինչպես և կատարողի կերպով արգելվում է ինքնահարկման դրամարների օգտագործումը վարչական ծախքերը ծածկելու համար (Խխանության տեղական մարմինների վարձատրություն, այդ մարմինների ղեկերի պահպանում կամ օգրքավորում և այլն):

§ 15. Ինքնահարկման կարգով դանձվող դրամարները գյուղի ընդհանուր ժողովների վորոշմամբ կարող են օգտագործվել այս հրահանգի § 13-ում թված կարիքներին (նպատակներին) հետևյալ ծախքերը ծածկելու համար՝

1) նոր ձեռնարկումների (դպրոցների, խրճիթների և այլն) կառուցման համար:

2) անցյալ տարիներից մնացած կիսավարտ ձեռնարկումների ավարտելու համար:

3) ձեռնարկումների հիմնական և ընթացիկ նորոգում կատարելու համար:

4) ձեռնարկումների շենքեր և դուռք վարձակալելու համար:

5) հիմնարկութունները կահավորելու համար:

6) տաքացնելու, լուսավորելու և այլ տնտեսական կառուցանքների բավարարելու համար:

7) կուլտուր-լուսավորական հիմնարկութուններին տնտեսական աշխատավարձը վճարելու համար:

ՈՒՔՔԵՐ ԵՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԻՆՔՆԱՀԱՐԿԱՆԸ

§ 16. Ինքնահարկմանը մասնակցում են՝

ա) լուրջ կոյտնտեսականները ամկախ նրանից ունեցողները, չհանրայնացված յեկամուտներ, թե վոչ:

բ) գյուղացիական մեծատնտեսները:

գ) բանվորները, ծառայողները, տնայնագործները, արհեստավորները և այլ ընդարձակները, վորոնք բնակվում են ամյալ դյուղում, յեթե նույն իսկ նրանք չեն վարում գյուղական տնտեսություն:

ԱՐՏՈՆՈՒԹԵՈՒՆՆԵՐ

§ 17. Ինքնահարկումից ազատվում են՝

ա) կոյտնտեսությունները (գյուղատնտեսական ուրուները, կամուտները, հողը միատեղ մշակող ընկերությունները:

բ) այն բանվորները, ծառայողները, կոոպերացիա տնայնագործները և արհեստավորները, վորոնք չունեն գյուղատնտեսական յեկամուտներ և վորոնց ամսական վաստակը 40 ռ. ավելի չի:

գ) Գյուղական վայրերում բնակվող և գյուղա-

տնտեսության չունեցող կադրային ու շարային հրամահարի զինվորականները (բացի յերկարամե արձակուրդում գտնվողներից) ինչպես և բանվորագյուղացիական միլիցիայում և ոստիկանացված արհակներում շարային աշխատանք տանող անձինք (նույն թվում նաև ոստիկանացված հրդեհային պահակախմբերի):

դ) ՍՈՇ Միության կամ գաղնակից հանրապետությունների մեկ կամ միքանի չքանչաններով կամ ստախովոր հեղափոխական զենքով պարզեատրված անձինք և աշխատանքի հերոտները:

ե) պատերազմի հաշմանդամները:

զ) պետական մարմիններից կամ հասարակական կազմակերպություններից կենսաթուղի ստացող այն անձինք, վորոնք չունեն ուրիշ յեկամուտներ (գյուղատնտեսությունից, վարձու աշխատանքից և այլն):

է) Հաշմանդամություն տալիս յեթևորդ և յերրորդ կարգին պատկանող աշխատանքի հաշմանդամները:

ը) Թուղի ստացող ուսանողները:

ԻՆՔՆԱՀԱՐԿԱՆ ԴՐՈՒԹՔՆԵՐԸ ՀԱՇՎԵՐՈՒ ԿԱՐԳԸ

ա) Կոյտնտեսականների ինքնահարկի դրույթները հաշվելու կարգը

§ 18. Այն կոյտնտեսականները, վորոնք 1932 թ. յենթարկված են գյուղահարկի պրոգրեսիվ դրույթներով, ինքնահարկ են վճարում 10 հուլիսի մինչև 14 ո.:

Որինակ՝ կոյտնտեսականը իր Հանրաքաղաքում յիկամուտների համեմատ 1932 թ. վճարում է 16 հուլիսի գյուղահարկ: Գյուղահարկի գումարից յերեկում է վոր հարկված է պրոգրեսիվ դրույթով: Տվյալ կոյտնտեսա-

կանը ինքնահարկի կտրուկ և յենթարկել 10 ո. — 14 ո. սահմաններում, այսինքն վճարի 10, 11, 12, և այլ ո. սակայն վոչ ավելի քան 14 ո. :

§ 19 Այն կոլտնտեսականները, վորոնք յենթարկված են գյուղհարկի, կայուն գրույքներով, կամ 1932 թ. գյուղհարկից ազատված ինքնահարկ են վճարում 5 ո. մինչև 8 ո. :

Որինակ՝ կոլտնտեսականը ունի 2 կով, վոչխարներ, դրողվում է թռչնաբուծությամբ և այլն, սակայն գյուղհարկից ազատված է չնորհիվ այն բանի, վոր սոնառնաբուծության յեկամուտները գյուղհարկի յենթակա չեն :

Ահա այս կոլտնտեսականը պիտի մասնակցի ինքնահարկմանը 5 ո. մինչև 8 ո. սահմաններում :

§ 20 Չհանրայնացված յեկամուտներ չունեցող կոլտնտեսականները ինքնահարկմանը մասնակցում են 5 ո. չափով :

Ծանոթություն. 1-ին — Չհանրայնացրած յեկամուտ չունեցող պետք է համարել այն կոլտնտեսականներին, վորոնք լրիվ չափով հանրայնացրել են իրենց յեկամուտները, բոլոր աղբյուրները և վորեւ ալ աղբյուր, բացի աշխատանքից կոլտնտեսության մեջ չունեն :

Ծանոթություն. 2-րդ — Գյուղխորհուրդին իրավունք է վերադրվում ազատել ինքնահարկումից լրիվ կամ մասնակի չափով 1932 թ. գյուղհարկից ազատված առանձին կոլտնտեսականներին :

Ծանոթություն. 3-րդ — ինքնահարկման գրույքները վորոշելու ժամանակ կոլտնտեսականների չհանրայնացրած յեկամուտներ պետք է հաշվել :

վել բոլոր տեսակի յեկամուտի աղբյուրները թե գյուղհարկի յենթակա (ցանք, հատուկ մշակույթներ, վոչ գյուղատնտեսական յեկամուտներ) և թե այն աղբյուրները, վորոնք գյուղհարկից ազատվում են արտոնություններ կիրառելու հետևանքով (անասուններ — մեղուներ, թռչնաբուծություն և այլն) :

Գյուղխորհուրդները իրավունք ունեն աննշան չհանրայնացված յեկամուտ ունեցող կոլտնտեսականներին (որինակ մի քանի թռչուն ունեցողներին) համարել վորպես չհանրայնացրած յեկամուտներ չունեցողների և ինքնահարկ դանձել 5 ո. չափով :

Ծանոթություն. 4-րդ — Կոլտնտեսականների և " տրոդրեսիվ գրույքներով գյուղհարկ վճարող մեհնադրանների առանձին կատեգորիայի համար սահմանված գրույքները տվյալ գյուղում պետք է լինեն միատեսակ :

Որինակ կայուն գրույքով գյուղհարկի յենթարկված կոլտնտեսականից, յեթե գյուղի ընդհանուր ժողովի վորոշմամբ սահմանված է դանձել ինքնահարկ 6 ո. ապա տվյալ գյուղի այդ կատեգորիայի բոլոր կոլտնտեսականները պետք է վճարեն 6-ական ուրիշ :

բ) Աշխատավարկամ մեհատնտեսների իմեհախույկը հաշվելու կառույց

§ 21. Այն մեհատնտեսները, վորոնք գյուղհարկ են վճարում կայուն գրույքներով, ինքնահարկմանը մասնակցում են 12 ո. մինչև 18 ո. :

Յեթե մեհատնտեսի գյուղհարկը հավասար, կամ

պահաս ե կայուն գրույթից (7 ա.) ապա նրա ինքնա-
հարկը պիտի կազմի շտնմադն 12 ա. ե վոչ ավելի 18
առբլուց :

§ 22. Այն մենատնտեսները, վորոնք յենթարկված
են գյուղհարկի պրոգրեսիվ գրույթներով, ինքնահարկ
պիտի վճարեն իրենց գյուղհարկի 100-ից մինչև 150
առկոսի չափով, սակայն վոչ պակաս այն գումարից,
վորը սահմանված ե կայուն գրույթով գյուղհարկ վճա-
րող մենատնտեսների համար :

Որինակ՝ գյուղի հասարակական ընդհանուր ժողո-
վի վորոշմամբ սահմանված ե՝ վոր կայուն գրույթնե-
րով գյուղհարկ վճարող մենատնտեսները պետք ե վճա-
րեն 15 ա. (12-18 ա. սահմաններում) իսկ պրոգրեսիվ
գրույթներով գյուղհարկ վճարողները վճարեն իրենց
գյուղհարկի— 140 առկոսը :

1) Մի մենատնտեսի գյուղհարկը հավասար ե 7 ա.
(կայուն գրույթ) : Այս մենատնտեսի ինքնահարկը պի-
տի կազմի 15 ա. :

2) Մի մենատնտեսի գյուղհարկը հավասար ե 10 ա.
(պրոգրեսիվ գրույթ) :

Այս մենատնտեսը ես պետք ե վճարի 15 ա. ինք-
նահարկ :

3) Մի մենատնտեսի գյուղհարկը հավասար ե 20
ա. (պրոգրեսիվ գրույթ) :

Ըստ ընդհանուր ժողովի վորոշման պետք ե գան-
ձել ինքնահարկ գյուղհարկի 140 %-ի չափով : Տվյալ
գեպքում մենատնտեսի ինքնահարկը պիտի կազմի 53
առբ. :

§ 23. Սակավադրության հետևանքով գյուղհար-

կից 1932 թ. ադատված մենատնտեսները ինքնահարկ
են վճարում 8 ա. մինչև 12 ա. :

Որինակ՝ ընթացիկ տարում մենատնտեսը գյուղ-
խորհուրդի ե գյուղի հարկային հանձնաժողովի վո-
րոշմամբ ադատված ե գյուղհարկից : Նա այնուամե-
ջայնիվ պիտի մասնակցի ինքնահարկմանը, վճարելով
8 ա. մինչև 12 ա. :

Ծանոթություն. — Գյուղխորհուրդները իրա-
վունք ունեն ադատել ինքնահարկումից լրիվ կամ
մասնակի չափով սակավադր այն մենատնտեսնե-
րին վորոնք 1932 թ. ադատված են գյուղհարկից :

**ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆՈՐ ՄՏՆՈՂ ՏՆՏԵՍՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԱՀԱՐԿԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

§ 23. ա. Այն մենատնտեսները, վորոնք մտնում են
կոլտնտեսության մեջ գյուղհարկի յենթակա յեկամաի
աղբյուրների հաշվառումից հետո, սակայն նախքան
ավյալ գյուղի ինքնահարկումը ձևակերպելը, ինքնա-
հարկը վճարում են կոլտնտեսականների համար սահ-
մանված չափերով :

**ԿՈՒԼԱԿԱՑԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԱՀԱՐԿԸ
ՀԱՇՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

§ 24. Բայր կուլակային տնտեսությունները վո-
րոք 1932 թ. յենթարկված են գյուղ-հարկի անհատա-
կան կարգով ինքնահարկման են յենթարկվում իրենց
1932 թ. գյուղհարկի դրույթի 200 %-ի չափով :

**ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ, ՏՆԱՅՆԱԳՈՐԾՆԵՐԻ
ՅԵՎ ԱՐՀԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ ԻՆՔՆԱՀԱՐԿԸ ՀԱՇՎԵԼՈՒ
ԿԱՐԳԸ**

§ 25. Այն բանվորները, ծառայողները, տնայնա-

գործները և արհեստավորները, վորոնք բնակվում են գյուղում, սակայն չունեն գյուղատնտեսություն ինքնահարկմանը մասնակցում են կալուն դրույքներով իրենց ամսական վաստակի համեմատ հետևյալ չափերով՝

ՄԵԿ ԱՄՍԱԿ ՎԱՍՏԱԿԻ ԶԱՓԸ	Ինքնահարկման դրույքները ուսրիներով	
	Բանվորների — ծառայողների յեկ կոտայերացված տնայնագործների ու արհեստավոր- ների համար	Վոչ կոտայերաց- ված տնայնագործ ների ու արհես- տավորների հա- մար
40 ա. ավելի մինչև 75 ա.	4 ա.	10 ա.
75 ա. » » 125 ա.	7 ա.	20 ա.
25 ա. » » 175 ա.	15 ա.	30 ա.
175 ա. » » 225 ա.	25 ա.	60 ա.
225 ա. » » 275 ա.	40 ա.	80 ա.
275 ա. » » —	60 ա.	120 ա.

Ծանոթություն. — Բանվորների ծառայողների, տնայնագործների և արհեստավորների ինքնահարկի դրույքները վորոչվում են ինքնահարկման կիրառմանը նախորդող վերջին ամսվա աշխատավարձի (վաստակի համեմատ) :

Որինակ 1-ին. Տվյալ գյուղում յենթադրենք ինքնահարկում կիրառելու մասին վորոչում է կայացվել սեպտեմբեր ամսում : Մի բանվոր ստացել է հուլիսին ոգոստոսին և սեպտեմբերին ամսական 165 ա. : Այդ բանվորի ինքնահարկի դրույքը պետք է կազմի 15 ա. ամբողջ տարվա համար :

Որինակ 2-րդ. Տվյալ գյուղում ինքնահարկումը կիրառելու մասին վորոչում է կայացվել նույն սեպտեմբեր ամսում : Բանվորը ստացել է ոգոստոսին 185 ա. , իսկ սեպտեմբերին նրա աշխատավարձը բարձրացել է 250 ա. : Այդ բանվորը ինքնահարկ պիտի վճարի ընդամենը 25 ա. ըստ իր այն ամսվա աշխատավարձի, վորը նախորդել է ինքնահարկման մասին վորոչում ընդունելու ամսինը :

§ 26. Վոչ կոտայերացված տնայնագործների և արհեստավորների մեկ ամսվա վաստակի միջին չափը պիտի վորոչել 31 թ. ընթացքում (նախորդ տարվա) ստացած այն յեկամուտի համեմատ, վորն յենթադրված է յեղել յեկամտահարկի (անկախ նրանից հարկված է այդ յեկամուտը յեկամտահարկով, թե ազատված է յեկամտի սահմանված միջիմումը չգերազանցելու պատճառով) :

Որինակ՝ վոչ կոտայերացված արհեստավորի ամսական վաստակը յեղել է 250 ա. : Նա պիտի վճարի ինքնահարկ 80 ա. :

Յեթե այդ նույն արհեստավորը կոտայերացված լիներ, նա իր այդ վաստակի համեմատ պետք է վճարեր ընդամենը 40 ա. :

Որինակ՝ վոչ կոտայերացված արհեստավորը 1931 թ. ունեցել է ընդամենը յեկամուտ 2400 ա. : Աշխատելով կլոր տարին : Նրա ամսական վաստակը հավասար է 2400 ա. : $12=200$ ա. : Այդ վաստակի համեմատ նա պետք է վճարի ինքնահարկ 60 ա. ամբողջ տարվա համար :

**ՎՈՉ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ
ԲԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԻՆՔՆԱՀԱՐԿԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

§ 27. Յեկամտահարկի յենթարկված կամ յեկամտահարկից ազատված այն անձինք, վերոնք — ունեն անաշխատ յեկամուտներ, ինքնահարկ են վճարում նրանց համար հատկապես հաշվարկված գյուղահարկի 100 %-ի չափով:

Որինակ՝ գյուղում ապրող և գյուղատնտեսություն չունեցող մեկը առևտրից յեկամուտ և ստացել գեղուի 1.200 ռուբլի:

Ինքնահարկի չափը վերջերս համար պետք է այդ յեկամուտից (1.200 ռ.) կուլակային տնտեսությունները համար սահմանված դրույքների աղյուսակով հաշվել գյուղահարկը:

Տվյալ դեպքում դա կկազմի 480 ռ. այդ չափով էլ նրանից պիտի դանձվի ինքնահարկ:

Վոչ աշխատավորական յեկամուտ ունեցող քաղաքացիների ինքնահարկը հաշվելու այդ կարգը կիրառվում է բոլոր դեպքերում անկախ նրանից, վճարում են նրանք յեկամտահարկ թե յեկամտահարկից ազատված են:

ԻՆՔՆԱՀԱՐԿԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ

§ 28. Ինքնահարկման գումարները դանձում է գյուղխորհուրդն այն ժամկետներում, վորպեսիք սահմանում է գյուղի ընդհանուր ժողովը:

Ծանոթություն. — Գյուղխորհուրդները և շրջգործկոմները պարտավոր են ձեռք առնել միջոցներ կուլակային տնտեսությունների ինքնահարկի լրիվ և սահմանված ժամկետին դանձումը սույն

հովելու համար, ապահովագրական վերաբեր կազմելու և դույլի վրա կալանք դնելու միջոցով:

§ 29. Ինքնահարկման ապառքները գյուղխորհուրդը դանձում է նույն կարգով, վորը սահմանված է գյուղահարկի համար: Ժամանակին չմուծված ինքնահարկման գումարներից դանձվում է տույժ:

§ 30. Ինքնահարկման դանձված գումարները մուծվում են պետական խնայողական գրամարկը:

§ 31. Ինքնահարկ վճարողների անձնական հաշիվները վարում է գյուղխորհուրդը և շրջֆինրաժինը:

**ԲՈՂՈՔՆԵՐ ՅԵՎ ԳԱՆՁԱՏՆԵՐ ՏԱԼՈՒ ՅԵՎ
ԲՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

§ 32. Ինքնահարկի վերաբերյալ դանդառները, բողոքները և միջնորդությունները արվում և քննության են առնվում նույն կարգով, վոր սահմանված են գյուղահարկի համար:

Դիմումները և բողոքները արվում են գյուղխորհուրդին, վորը պարտավոր է քննության առնել և հայտնել խնդրատուներին հետևանքների մասին:

§ 33. Գյուղխորհուրդի վորոշման դեմ բողոքները արվում են շրջգործկոմին՝ գյուղխորհուրդի միջոցով:

Գյուղխորհուրդը կցում է տրված բողոքին բոլոր նյութերը և իր յեղբայրացության հետ միասին ներկայացնում է շրջգործկոմին:

Շրջգործկոմները վորոշումները վերջնական են:

**ԻՆՔՆԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՈՐԳԱՆՈՐԾԵԼՈՒ
ԿԱՐԳԸ**

§ 34. Ինքնահարկման կարգով դանձված գումարները մուծվում են գյուղխորհուրդի գլխավոր օժիտ

1-30378

Վորում անպայման պահվում է ինքնահարկման նպատակային բովանդակությունը: Բյուջեյի ծախսային մասում ճշտվի կերպով ցույց են տրվում այն ձեռնարկումները, վորոնց իրադրծման համար գյուղի ընդհանուր ժողովի վորոշմամբ պետք է ծախսվեն ինքնահարկման միջոցները:

§ 35. Մեկ ընդհանուր նպատակի համար մի խորհուրդով չմիացված գյուղերի ինքնահարկման միջոցները մացվում են համապատասխան գյուղխորհուրդների բյուջեյի մեջ և ծախսվում են նույն գյուղխորհուրդի կողմից, չրջործկումների ցուցմունքներով:

§ 36. Շրջանային նշանակություն ունեցող ձեռնարկումների համար կիրառվող ինքնահարկման միջոցները նույնպես մացվում են համապատասխան գյուղխորհուրդների բյուջեյների մեջ և ծախսվում են կուլտուրական ու սնտեսական կապիտալ շինարարություն վրա չրջործկումների ցուցմունքներով:

§ 37. Ինքնահարկման կարգով զանձված այն միջոցները, վորոնք չեն ոգտադրծվում սվյալ տարում, մտղվում են հետևյալ տարվա գյուղական բյուջեյի մեջ և ծախսվում են բացառապես այն նպատակների համար, վորոնք մատնանչված են ընդհանուր ժողովների վորոշումների մեջ:


§ 38. Ինքնահարկման միջոցները ճիշտ և ժամանակին ծախսելու վրա հսկողությունը իրադրծվում է գյուղխորհուրդների և չրջանային գործադիր կոմիտեների վերատուրիչ հանձնաժողովների կողմից:

§ 39. Ինքնահարկման միջոցներով կատարվող շինարարություն վրա հսկողություն ունենալու տեխնի-

կապես ոժանդակելու, ինչպես և դիֆիցիտային շինանյութեր մատակարարելու պարտականությունը դրվում է չրջանային գործադիր կոմիտեների վրա:

Մասսայական վճարումների սեկտորի

ղեկավար՝ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ



ՀՀ Ազգային գրադարան



NL0866636

1
3037

Արքային՝ Ո, ՂԻՄՈՅԱՆ

ՀԱՅԳՈՂԻԳՐԱՅԻ ՏԳԱՐԱՆ

Գլխավոր 6252

Գառվեր 2928.

Տիբա 1000.